

ԳՐԵՆԳԻՆ Ը ՄԵԺԻ ՏՈՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԵԹՈՂԻԿՈՍԸ

Հայաստանյայց եկեղեցւո միասնականության առաջալը



արդեր կան, որոնք կփառավորվին գահով մը, իսկ գահեր ալ կան, որոնք կփառավորվին մարդով մը: Կիլիկիո Կաթողիկոսական Գահը, 1845-ին, աննախընթացորեն փառավորվեցավ անստղծյոտ արժանիքներով օծոված Գահակալով մը, հանձին Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի:

Նորին Ս. Օծովթյան անձին հմայքին և հոգեռանդն գործունեության շնորհիւ հայությունը, հատկապես Սփյուռքի մեջ, կապվեցավ Կիլիկյան Աթոռին և իր սրտաբուխ և յիստատ նյութական օժանդակությունը բերավ անոր մշակութային վերելքին և ազգօգուտ գործունեության: Մեծանուն Հայրապետը կազմակերպեց Կիլիկյան թեմերը, հատուկ կանոնադրութիւն պատրաստեց Աթոռին համար, Անթիլիասի դպրեմանքը դարձուց գիտության և հայ մշակույթի կեդրոն, հիմնեց թանգարան և ժողովրդային լսարան, կարգավորեց տպարանը և մասնաւոր շարունակ ճոնչեց կարևոր գործեր ի լույս բնծայելով, Աթոռը օժտեց նոր կալվածներով և հասութաբեր շենքերով:

Մենք, որ տասնչորս տարիներ երջանկահիշատակ Հայրապետին գործակիցը եղած ենք, պիտի չուզենք ծանրանալ Անոր այս իրադործումներու վրա, իրագործումներ, որոնք կկազմեն ներկայի փառքը Անթիլիասի Կաթողիկոսության, և որոնք ավելի մեծարժեք են ու թանկագին քան ոսկին ու ադամանդը: Իր մահվան տասներորդ տարեփոխին առթիւ, երբ անհայտ մշուշի մեջ են իր

գեմքը կդիտենք, և երբ Ան կրկին մեզ համար կենդանի և ոգևորող ուժ կհանդիսանա, պատշաճ և տեղին կնկատենք ներկայացնել զինքը իր իսկության մեջ, իբրև շատագոյն ու առաքյալը քովե-քով կցված գույգ սրբազան խորաններուն, Ազգին ու եկեղեցիին, միության և միասնականության, որուն իրագործման համար Ան իր կյանքը զոհարեց:

Գարեգին Կաթողիկոսի շատագոյն միությունը էապես կրոնական էր և ոգեկան. անոր մեջ որեւէ քաղաքական և կամ հատկապէս նկատում և գունավորում ամենևին չէին կրնար մուտ գործել: Իրն են սա խոսքերը: «Որոնք կպատկերացնեն իր անձը ճշմարտորեն. ճշմարտով ապրենք, հավատով գործենք, հավատով մեռնենք մեր նախնիքներին, մեր սրբութիւններին, մեր եկեղեցու և մեր ժողովրդի համար: Վասնենում եմ, որ ամբողջ հայութիւնը յինի հոգով մի, սրտով մի. միության մեջ է մեր հաջողութիւնը, մեր գոյության տեականացումը, մեր փրկութիւնը: Մեր կյանքում պետք է միշտ ձգտենք միության, հոգևոր իմացական միության. նոր սերունդը էս հոգով, էս ապրումով պետք է պատրաստուի: Մի է Հայոց եկեղեցին և նրա նվիրապետութիւնը. մի է հայ ժողովուրդը. ձեռք-ձեռքի տանք և ուխտ անենք, որ սիրով և նվիրումով պիտի գործենք հայ ժողովրդի և եկեղեցու միության համար: Մենք մեծ և փառավոր Ազգ ենք. մեր թիվը միլիոնների է հասնում, որովհետև ունենք մեր սրբերն

ու նահատակները, մեր վարդապետներն ու հայրապետները, մեր մարտիրոսներն ու քաջարի մարտիկները. եթե ապրենք նրանց հոգով, եթե գործենք նրանց ջահակրած գաղափարով, և եթե լինենք մի, մենք կլինենք ավելի մեծ, ավելի հզոր».

Նրանաշնորհ Հայրապետը, որուն մեջ ժողովուրդը կտեսներ զիտուն և հավատավոր և կենդեցականը, համակ ենթաշնորհ, խանդավուն ու բոց, մարմնացումը Հայոց աշխարհի ոգիին, գեղեցկության, փառքին և ստեղծագործությանը, բայց մանավանդ հարացույցը հայ ժողովուրդի և Եկեղեցվո միության և միասնականության, իբրև ուսուցիչ և տեսուչ, առաջնորդ և նվիրակ, և հուսկ ուրեմն իբրև Կաթողիկոս Տանն Կիլիկիո, իր ռովանգակ կյանքի ընթացքին, ուր որ ալ գտնվեցալ, Մայր Հայրենիքեն մինչև Միջին Արևելք, Եվրոպա և Ամերիկա, շարունակ իր գրիչն ու խոսքը. իր կարողությունն ու փորձառությունը բոլորանվեր ի սպաս դրավ հայ ժողովուրդի միության և Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետական և առաջնորդական Աթոռներու սիրալիր հարաբերության ու համագործակցության իրականացման համար:

Տաղանդաշատ Վեհր կապտգամեր հայտարարելով. որ մեր Ազգին նվիրապետական և առաջնորդական Աթոռները, իրենց պետերով և առաջնորդներով, Ս. էջմիածնի և անոր Գահակալին հետ կկազմեն անքակտելի և անխորտակելի ամբողջականություն մը, միություն մը. «Սառն արմատով է ծառս, Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետության կեդրոնը Ս. էջմիածինն է. մյուս Աթոռները անոր անբաժան մասերն են, «Որթը» էջմիածինն է, իսկ «Ուրծ»՝ Կիլիկիո Կաթողիկոսությունը և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսո Պատրիարքությունները, Մեկն ավելի Աթոռներ կրնան գոյություն ունենալ, սակայն մի է Հայոց Եկեղեցին, մի է Հայոց Հայրապետությունը, որովհետև անոնք դժպիհի պայմաններու այսպեանով են և կրնան ներդաշնակվիլ, երբ այդ այլազանության վրա տիրապետե ճշմարիտ իրավախոհության, համագործակցության և միության ոգին, Հայաստանյայց Եկեղեցվո Հայրապետական Աթոռներուն իրարհասկացողությամբ, սերտ հարաբերությամբն ու համերաշխ գործակցությամբ, կստեղծվի ներքին այսպիսի զորավոր ուժ և զիմացկունություն, որոնցմով կպայծառանան Ազգն ու Եկեղեցին և կարելի կըլլա ուժացման և ձուլման առաջն առնել:

Կիլիկիո երանաշնորհ Կաթողիկոսներն Սահակ և Բարդեմ, արժանավայել արթնամտությամբ, պարտականությունաց կատարյալ զիտակցությամբ, տաղանդացուցիչ պայ-

մաններու մեջ իսկ պաշտպանեցին Հայաստանյայց Եկեղեցվո միասնականությունը և գործեցին անոր իրականացման համար: Սահակ Կաթողիկոս իր հովվապետության ընթացքին միշտ ջատագով հանդիսացավ էջմիածնի և Կիլիկիո Աթոռներուն իրարհասկացողության և համագործակցության, Ամենայն Հայոց Հայրապետներուն հանդեպ ան շարունակ ճշմարիտ սեր և հարգանք ցուցաբերեց, 1936 զեկտեմբերին, երբ Գարեգին սրբազան իբրև լիազոր նվիրակ Մայր Աթոռ Անթիլիաս կգտնվեր և մեկնումի պահուն կուզար հրաժեշտ առնելու Սահակ Կաթողիկոսին, ծերունազարգ Հայրապետը համարուեց անոր ճակատը և ըսավ.

— Իմ սիրո ողջություններ և որդիական խորին հարգանքները մատուցեք Ամենայն Հայոց Հայրապետին, Վեհափառ Ս. նորեն Կաթողիկոսին, Կաղոթեմ, որ Աստված երկար կյանք պարգևի Նորին Ս. Օծուխան հովվելու բազմաշարար Ազգն ու Եկեղեցին:

Երկու Աթոռներու հարաբերությունները ավելի սերտացան մանավանդ նորեն Ա. և Բարդեմ Ա. հայրապետներու օրով: Բարդեմ Կաթողիկոս ջանաց Ս. էջմիածնի երթալ ներկա ըլլալու Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և նախագահելու օծման արարողության: Այս կերպով ան կջանար ավելի ամրապնդել հայ նվիրապետական Աթոռներու միջև սիրո, համերաշխության և միության կապը: Բարդեմ Վեհր Թե՛ գրով և Թե՛ խոսքով ճշմարտորեն հանդիսացավ Հայ Եկեղեցվո միասնականության ախոյանը, Նորին Վեհափառությունը 1936 զեկտեմբերին Գարեգին Կաթողիկոսին հայտարարեց և շեշտեց, Թե սԿիլիկիո Աթոռը կպահվի էջմիածնի Աթոռին համար և իր բոլոր նպիսկուպոսներով հավատարիմ է Մայր Աթոռին:

Իսկ Գևորգ Զ-ի և Գարեգին Ա-ի օրով երկու Աթոռներու միջև միասնականության զաղափարը բոլորովին իրականացավ: Պատմության մեջ առաջին անգամ Կիլիկիո Կաթողիկոս մը՝ Գարեգին Վեհր նախագահեց էջմիածնի Կաթողիկոսական ընտրության և օծման հանդիսությունը Նորին Ս. Օծուխանը 1945-ին, Ազգային-եկեղեցական համաժողովի բացման նիստի միջոցին հետևյալ հատկանշանական հայտարարությունը ըրավ. «Այս ժողովը արտաքու կարգի երկվյթ է մեր պատմության մեջ, ծովեր և հեռավոր տարածություններ ունիլ ենք համարեր և եկեր ենք ցույց տալու, որ մի է Հայ Եկեղեցին և մի է Հայոց Հայրապետությունը: Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունն հետո, ճաշկերպով ընթացքին, Գարեգին Կաթողիկոս Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետական Ա-

